Ե. ՏԱՐԻ — ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 30 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1902 — Թիւ 464

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար
Տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ 6 »
Արտասահմանի
համար տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »

Ամերիկայի համար
Տարեկան 3 տոլ.
Վեցամսեայ 1.50 »

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ է. Երեքէն աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կըլլայ:

Վառնայի համար ձ՛ոքէ 10 սանթիմ

# ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ՝ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Նամակ եւ դրամ ղրկել խմբագրութեան հասցէին:

Редакция на вѣстникъ
„Шаржумъ"
Варна

Redaction du journal
„Charjoum"
Varna (Bulgarie)

Արտասահմանի համար ձեռքէ
)( 20 ՍԱՆԹԻՄ )
Պուլկարիոյ համար ձեռքէ
)( 15 ՍԱՆԹԻՄ )(

Գրութիւնք ետ չեն տրուիր

☛ «ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ ☚

## ԱՆԷ՛ԾՔ

Ո՛վ հայ հարուստներ, մետաղէ սրտով,
Դո՛ւք, որ չէք զգար գեղջուկին անո՛ւք.
Մէկ է ձե՛զ համար՝ սնգուրին անունք,
Բաւ է որ՝ ապրիք դուք կեանք մ'անվրդով,
Ո՛վ հայ հարուստներ, մետաղէ սրտով։

Ո՛վ դո՛ւք, հայրենի ջոջեր փառասէրք,
Ձեզ դեռ չմեղմեց արեան գէտ ու հով,
Ու կղպէք դուք ձե՛ր արկղին ուժով,
Զանգաք մէկ կէտն հաշուին կոյր ու բիրտ,
Ո՛վ դո՛ւք, հայրենի ջոջեր փառասէրք։

Դո՛ւք տեսաք, ինչպէ՛ս մահուան սեւ փողար
Ծաղկալից դաշտեր անապատ ըրաւ.
Էհ, դուք անզոր էք, անխիղճ էք իրաւ
Որ այս ֆանդուլին առջեւ չէք դողար.
Դուք տեսաք անհոգ մահուան՝ սեւ փողար։

Անէ՛ծք պաշտասանց ձեր այն պարծարերուն,
Որոնց փառքին պատեր մրման խուլ՝
Դա՛րն լացերուն, գոչերուն անդուլ՝
Մատաղ հայ աղջկանց, կանանց մահամերձ.
Անէ՛ծք պաշտասանց ձեր այն պարծարերուն։

Անէ՛ծք ձեզի ալ, ձեր դրամին ալ,
Որ դեռ չէ՛ք բոլոր փշրեր սեւ աղէտ
Բաղդըն հայութեան եւ վէճ կռուի դէմ
Դեռ կը յամառիք անտարբեր մընալ.
Անէ՛ծք ձեզի ալ, ձեր դրամին ալ։

Անէ՛ծք ձեզի որ կ'ատէք սուր ու զէնք,
Եւ հայ հերոսին չէք փիկուէք ու քէր.
Կ'ատէ՛ք քաջերը ճորտի, պարզեւ
Որ խրոխտ ձայնեն. «ամէնք կռուի կոչենք».
Անէ՛ծք ձեզի, որ կ'ատէք սուր ու զէնք։

Անէ՛ծք ձեզ, այո՛, ձեզ՝ որ չէք փութար
Տալու մըր մեծաղ հայուհեաց ըշան,
Փշուր մը հացի՝ հայուն անօթեալ.
— Եւ իմ զայրոյթս զգնէք անտարբե՛ր —
Անէծք ձ՛եզ, այո՛, ձեզ՝ որ չէք փութար։

Արդա՛ր է Աստուած, անիծէ բո՛ղ ան՝
Եասմով, շուայտ ձեր այդ կեանքը ա՛ն.
Եւ որ մը խոր ցաւս ու սեւ փորին՝
Ձեր չորցած զանկեր բո՛ղ սարսին, դողան...
Արդա՛ր է Աստուած, անիծէ՛ բող ան։

ՎԻՏԱ

## ԱՐԵՒԵԼՔԻ ԳՈՐԾԵՐ

Էօտօրէնի վերջին թիւին մէջ ծանօթ հայասէր պ. Լըռուա Պօլիէօ հետեւեալ ուշագրաւ յօդուածը հրատարակած է, զոր թարգմանաբար կ'արտատպենք իր կարեւորութեանը համար:

Ո՛վ որ քաջութիւնը ունի առանց կողմնամտութեան նկատելու պալքանեան երկիրներու յուզումը և Թուրք կայսրութեան ներքին խռովութիւնները, պիտի համոզուի թէ Արեւելքի կացութիւնը տարօրինապէս վրդովիչ է: Անիկա չի կրնար աւելի երկար տեւել՝ առանց ենթարկելու Թուրքիան և հետեւապէս Եւրոպան զինուած կռիւներու վտանգին, որուն ոչ ծաւալը ոչ ելքը կարելի է նախատեսել:

Եթէ Արեւելքի ժողովրդոց տառապանքը, եթէ Մակեդոնիոյ քրիստոնեաներուն կրած ստորնութիւններն ու տուայտանքը, եթէ Հայաստանի լեռնադաշտերուն վրայ ամբողջ ժողովուրդի մը բնաջնջման ձեռնարկը որ յամառօրէն առաջ կը տարուի, չեն կրնար շարժել մեր եսասիրութիւնը, պետական մարդոց խոհեմութիւնը և դիւանագէտներու արթնութիւնը չեն կրնար անտարբեր մնալ Մակեդոնիոյ և Հայաստանի մէջ յարաճուն խառնակութեան և ապստամբներու հաւաքմանց: Եւրոպիոյ ինչպէս Ասիոյ մէջ, Սուլթանը կը ջանայ բարեկարգութիւնը սարսափով վերահաստատել: Թալանը, բռնաբարումը, կոտորածը եղած են իր կառավարական սովորական միջոցները՝ Վարտարի և Ստրումայի հովիտներուն մէջ, ինչպէս Վանայ լճին ափերուն և Վերին Եփրատի ցից եզերքներուն վրայ: Մակեդոնիոյ քրիստոնեաները, Սլաւները մանաւանդ իրենց կարգին բնաջնջումի վտանգին տակ կը տեսնեն ինքզինքնին: Բայց որովհետեւ գէթ դաշտերուն մէջ թիւի առաւելութիւնը ունին իրենց կողմը, որովհետեւ կրնան կրթնիլ Իշխանապետութեան իրենց պուլկար եղբայրներուն, կը ձանձրանան ճիտերնին խողխողիչներուն երկարելէ: Երիտասարդութեան ընտրելագոյն մասը կը թողու քաղաքներն ու գեղերը և լեռան զինուած հրոսախումբերը կերթայ ստուարացնել:

Եթէ ձմեռը մօտ չըլլար, ընդհանուր ապստամբութենէ մը կը վախցուէր: Մակեդոնիոյ այսօրուան կացութիւնը համանման է Հերսէկ—Պոսնայի կացութեանը 1876ին. կամ աւելի ճիշդը՝ յոռեգոյն է, վասնզի Սուլթանին կողմէ նահանգին մէջ կատարուած գործքերը կը հարստահարեն ու կ'աւերեն զայն և իրենց ծայրայեղութիւններովը կը գայրացնեն քրիստոնեայ դժբախտ ժողովուրդները:

Եթէ եւրոպական դիւանագիտութիւնը չկարենայ չարիքին առաջքը առնել, Մակեդոնիոյ մէջ պիտի պատահի ինչ որ պատահեցաւ երբեմն Պոսնայի մէջ: Գարնան ապստամբութիւնը ամենուրեք պիտի տարածուի հոն, Պուլկար կառավարութիւնը, ինչպէս առտենօք Սերպիան ու Մոնթենեկրօն, ուզէ չուզէ պիտի մղուի բացէբաց պաշտպանել Մակեդոնիոյ քրիստոնեաները: Սերպիան չպիտի ուզէ ետ մնալ: Ռուսիան եւս, հակառակ Աւստրիոյ—Հունգարիոյ հետ իր համաձայնութեան և Ծայրագոյն Արեւելքի իր մտադրութեանը, չը պիտի կրնայ անզգած հանդիսատես ըլլալ իր օրթոտոքս եղբայրներուն պայքարներուն եւ մանաւանդ անոնց ջախջախումին: Եւ այսպէս, դիւանագիտութեան անհեռատեսութեամբը կամ լաւ եւս կառավարութեանց անտարբերութեամբը կամ վատասրտութեամբը Եւրոպա պիտի կրնայ դահավիժուիլ Արեւելեան նոր պատերազմի մը, որմէ պիտի ծագէր համաշխարհային պատերազմ մը՝ նկատի առնելով աշխարհի կացութիւնը:

Ասոնք իսկապէս մթին հեռանկարներ են. անոնք դիտմամբ

